դիզում ենք այնքան անպէտք ու աւելորդ առարկաներ, որոնք մեզանից շատ աւելի են ապրելու: Մենք ընդհանրապէս խիստ ենք կապուած կեանքին ու կեանքի մանր բաներին. այդ պատճառով էլ մահը մեզ համար կարծես միշտ յանկարծակի է գալիս, իբրեւ մի անակնկալ, երկնքից ընկած բան: Այլ է ճապոնացու հայեացքը: Նա հէնց իր մանկութիւնից նայում է իր կեանքին, ինչպէս մի արագ անցնող ու ժամանակաւոր բանի, ու դրա համար մեզպէս երբէք մեծ կարեւորութիւն չի տալիս այս աշխարհի բաներին: Ի՞նչու այդչափ հոգ տանենք իրերի տեւականութեան մասին, մտածում են նրանք, երբ մենք ինքներս տեւական չենք:

—Գիտէք, օրիորդ,— խօսքը շարունակեց նա դառնալով ինձ.— այս տեսակէտից խիստ բնորոշ է ճապոնական այբուբէնը:

—Ի՞նչպէս:

—Լսած չէ՞ք. դա մի ոտանաւոր է. այ, մօտաւորապէս կարելի է թարգմանել. «Գոյնն ու բոյրը կորչում են. մեր կեանքում ի՞նչն է մշտական: Այսօրն էլ սուզուեց ոչնչութեան անդունդը. դա երազի մի անկայուն նմանութիւն էր եւ իր ետեւից ոչ մի հետք չը թողեց»: Այս խօսքերը երեխաները կրկնում են շարունակ դպրոցում, եւ այս խօսքերի դրոշմը մնում է նրանց սրտում ամբողջ կեանքի մէջ: Այդ կնիքը դրուած է նրանց բովանդակ կենցաղի վրա, նրանց պարզ ու ազատ նիստ ու կացի, նրանց բնակարանների վրա, որոնք այն աստիճան թեթեւ եւ օդային են, որ ամեն մի անգլիացի նաւաստի ուսովը կարող է տեղիցը հանել. նոյն կնիքն է նրանց ամուսնական կապերի վրա, որ այնպէս հեշտ խզելի է:

—Զարմանալի է,— ընդհատեցի ես,— որ այս տեսակ հայեացքը նրանց մռայլ չի դարձնում:

—Ի՞նչու. ընդհակառակը. դա շատ բնական է: Ապագայի